




Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ջ Ի Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ը

Հոգիածաղիւ պ. Երվանդ Աղաջանյանը 1955 թվականին Ս. էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովում ամերիկահայ պատգամավորներից մեկն էր, որ ժողովի երրորդ նիստում, 1955 թվականի հոկտեմբերի 5-ին, ամերիկահայ պատգամավորության անունից խոստացավ տպարանական սարքավորում նվիրել Ս. էջմիածնին, նորընտիր Հայ-րապետի՝ Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երջանիկ րնտրության առիթով:

Տպարանական գործի կապակցությամբ Հյուսիսային Ամերիկայի միացյալ Նահանգներում կազմվել է ՄԱՅՐ ԱՐՈՒ Ս. էջմիածնի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ, որը նախարկված է հանգանակության և «հարյուր հազար դոլար գոյացնելով պիտի օժտե Մայր Աթոռը տպագրական մեքենայով»:

Տպարանական հանձնախմբի վարչական կազմի մեջ են մտնում որպես պատվակալ ատենապետներ՝ զերաշնորհ Տ. Մամբրե արևայիսկոպոս Դավիթյանը, զերաշնորհ Տ. Վարդան արևայիսկոպոս Դասպարյանը, զերաշնորհ Տ. Շնորհք հայիսկոպոս Դալուսյանը: Վարչության ատենապետն է պ. Նդվարդ Աղաջանյանը, գանձապանը՝ պ. Զարյա Դարակյոզյան, ֆարտուղարը՝ պ. Տիգրան Սմառյան, իսկ պատվիրակներն են՝ պ. պ. Երվանդ Աղաջանյանը, Տիգրան Բոյանյանը, Հերի Բյուրդը, Նորեն Դավիթյանը, Հերի Հայրապետյանը, Մկրտիչ Քուլիկյանը, Տիգրան Սըմառյանը և Հայկ Սմառյանը: Վարչական պատասխանատու կազմից բացի, հանձնախմբի մեջ մտնում են նաև վարժուհիներ Երկաթ անդամներ:

Մայր Աթոռ արդիական կառավարված տպագրական մեքենաներով և սարքավորումներով օժտելու գործը կարևոր է և անհրաժեշտ, որի մասին անդրադարձել է Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ սրբատառ կոնդակում: Ահա այս մասին է, որ գրում է նաև պ. Նդվարդ Աղաջանյանը. Ս. Մեսրոպի գերեզմանին ուխտի գնալու առիթով:— ԽՄԲ.:

«Եվ երբ մեզ խոստացված նվիրատվությամբ հաջողի՞նք Մայր Աթոռի տպարանը հիմնել, պիտի սկսի՞նք հրատարակել նաև այլ պարբերականներ ու հոգևոր եկեղեցական գրականություն, և Մայր Տաճարի գանգակները հաղթական պիտի դողան՞ք, և հորիզոնն հորիզոն պիտի ավետեն, քե այս-

տեղ կենդանի է Ս. Մեսրոպի ոգին և կանգուն Ս. էջմիածինը, հայ ժողովուրդը լուսավորելու իր փառազարդ նամրուն վրա»: Երբ Վեհափառ Հայրապետին անդրանիկ կոնդակին մեջ կկարդանք այս տողերը, կզգանք մեր վրա դրված պատասխանատու գործին կենսականությունը, որուն իրակա-

նացումին երևակայությունն խոյ ներշնչում
կուտա գուշակելու անոր իրական արդյունք-
ները:

Մայր Հայրենիքին մեջ շատ քիչ բաներ
կան, որոնք դարձրելու ընթացքին իրենց իրա-
կան վրձակեն խախտած չեն Մ. Մեսրոպի
գերեզմանը աստեղմե մին է, որ Օշականի
եկեղեցիին ավագ սեղանին ներքե, սուր-
երկրյա մատուռին մեջ կգտնվի... կոչվելով
«Քարգմանչի գերեզման» և դառնալով ուխ-
տատեղի մը հայ ժողովուրդին համար:

Որ մենք Մայր Հայրենիք գացինք, ամե-
նամեծ փափագներեն մին էր Մ. Մեսրոպի
գերեզմանը այցելել:

Այս փափագը շատ շուտով իրականա-
ցավ: Առտու մը բավական համրողելի
վերջ Աշտարակ և Քասաղ գյուղերուն մեջեն
անցնելով, Օշական գյուղը հասանք: Ան-
մատչելի վայր մը հսկայական լեռներու
մեջ թաղված...

Մեր խումբը, որ գրեթե քսան անձերն
կրաղկանար, որոնց մեջ էին Շնորհարկյա-
կոպու Գալուստյան, Թնթոյան և Վաղարշյան
վարդապետները, երբ եկեղեցին մտանք,
կարծես հոգեկան հուզմունքն մը բռնվե-
ցանք: Բոլորիս ալ աչքերը թաց էին: Սուրբ
գետնի վրա կկոխեինք և կզգայինք Ս. Մես-
րոպի հոգիին ներկայությունը: Յկած էինք
երկրպագելու այն գերեզմանին, որ կիրք
մասունքները մեծ Վարդապետին, որուն
երևակայությունը, հոգացումը անխոնջ և
տքնաշան աշխատությունը կերտած էին
հայուն ամենագորավոր զինքը, իր Ա Բ Գ-ը:

Փետնահարկը գերեզմանին քով իջնելի
առաջ, խորանին առջև շարված, մեր հոգե-
վոր հայրերուն առաջնորդությունը երգեցիք
շարականներ և աղօթեցիք արցունքոտ աչ-
քերով: Կարծես մեր հոգիները, սիրտը և
ամբողջ էությունը մաքրագործել կուզեինք,
արժանի սեպելու մեզ, մոտենալու այդ
պատկանելի սրբատեղիին, ուրկն կրխն
ամբողջ ազգի մը դոյություն ղլխավոր իրա-
վունքներեն մին:

Կորյուն վարդապետ, որ Մեսրոպ Մաշ-
տոցի աշակերտներն և գործակիցներն էր,
Մաշտոցի կենսագրությունը գրած է 443—
451 թվականներուն: Գիրքը կկոչվի «Կո-
րյուն, Վարր Մաշտոցի»: Կորյուն վար-
դապետ իր գրքին մեջ կրսն. «Հայ-
րական շափուն ծնեալ ծնունդ և նորոգ և
սքանչելի Ս. Աղովն իւրով նշանագիրս հայե-
րէն լեզուի» — այսինքն, ան իր Ս. Աղովն
հայրաբար ծնեց (կամ հորինեց) նոր և
սքանչելի հայերեն լեզվի նշանագրեր...

... Հայ գիրը զենքին տեղը պիտի բռներ,
որ իրապես ավելի մահացու եղավ թշնա-
միին քան զենքի ուժը: Մեր հոգեւոր հայրե-

րը այդ սոխիթ օգտագործեցին, անմիշա-
պես Ս. Գիրքը և ուրիշ շատ մը գրքեր հա-
յերենի թարգմանեցին...

Ճիշտ է, թե պատմությունը ինքզինքը
կիրկն հաճախ: Հայ ազգը այսօր նույնքան
և ավելի նման ուժացման վտանգին տուչ
կգտնվի, քան չորրորդ և հինգերորդ դարե-
րուն: Այսօր հայ մեծ գանդվածներ իրենց
մայր երկրին դուրս կապրին և քաղաքացի-
ներ են այլևայլ երկիրներու: Անոնց զավակ-
ները մեծ մասով հայերեն գրել և կարդալ,
նույնիսկ հայերեն խոսիլ չեն գիտեր: Այո,
սուրբ հայու զավակներ են, բայց այդ եր-
կիրներուն մեջ ծնած և այդ երկիրներուն
կապտկանին: Նույնիսկ մենք, որ Մայր
Հայրենիքի մեջ ծնած ենք, բայց կամովին
ընդունած ենք այլևայլ երկիրներու քաղա-
քացիությունը, մեր առաջին հավատարմու-
թյունը կապտկանի հանդեպ մեր որդեգրած
երկիրներուն: Միեւնու ռմանք թիրևա չեն
անդրադառնար այս իրականության, բայց
այս անուրանալի իրողություն մըն է: Ու-
րեմն, ի՞նչ է ճարը, դարձանք մեզ իրարու
հետ, մեզ մեր զավակներուն հետ, մեզ և
մեր զավակները մեր Մայր Հայրենիքին
հետ կապված պահելու:

Ինչպես տասնհինգ դարեր առաջ, այսօր
ալ այդ ճարը և դարձան է ամենեն ավելի
եկեղեցին հայերեն լեզվով: Մակայն, այդ
հեղինակությունը պետք է, որ Ս. էջմիա-
ծենն բխի, որ մեր եկեղեցիին հիմն է: Անոր
հիմնումը և հեղինակությունը կապված են
աստվածահրաշ տեսիլքի հետ: «Երևեսցի
զՏաճարն անուանն Աստուծոյ որ ցուցաւ ի
տեղւոջն՝ ուր սիւնն հրեղէն ունէր զոսկի
խարիսխն... և տեղին այն լիցի տաճար
Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամե-
նայն հաւատացելոց և Աթոռ Քահանայա-
պետութեան»: Որով Առաքելական Գահուն,
Մայր Տաճարի և ուրեմն մեր եկեղեցիին
բարձրագույն հեղինակության Ս. էջմիա-
ծենն հաստատվիլը գերաշուշն խորհուրդն մը
թելագրված է:

Չորս հարյուրական թվականներուն Ս.
Մեսրոպ հայ գրերը հորինեց, Հայոց եկեղե-
ցիին ինքնություն տալու համար, որպեսզի
մեզ իրարու կապված պահելու գերին ծա-
ռայի: Այսօր մենք Մայր Աթոռ տպագրա-
կան մեքենայով պիտի օժտենք, զորացնե-
լու եկեղեցին նույն գրերով, որ ի վիճակի
ըլլա վերստանանելու իր այդ գրերը: Ինչպես
որ ըսված է՝ «ի վերայ Աղոյն և Ս. էջմիածնի
ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Այս գիտակցությամբ էր, որ ծունկի
եկանք Ս. Մեսրոպի շիրիմին առջև: Ար-
ցունքով լեցված աչքերով համբուրեցինք
պառ քարը և քացիք մեր հոգիին և սրտին

դռները, որ լեցվին անոր անմահ ոգիով: Երբ Օշականի եկեղեցիին դուրս եկանք, եկեղեցիին դռնեն քիչ անդին, բակին մեջ արձանի մեծությամբ դերեզմանաբար մը տեսանք, որու վրա փորագրված էր «Վահան Ամատունի իշխան Հայոց»: Ամատունիք Արարատյան աշխարհի տերն էին Ս. Մեսրոպի վախճանած ժամանակ: Իշխան Վահան Ամատունին, որ Օշական ծնած էր, Ս. Մեսրոպի մարմինը Օշական փոխադրելով եկեղեցիին մեջ թաղել տալն ետք կտակ կրնն, որ երբ մեռնի զինքն ալ եկեղեցիին բակին մեջ թաղեն: Այո, Ս. Մեսրոպի գերեզմանը ներսը խորանին տակ, հայոց իշխանն ալ դուրսը պահակ կանգնած:

... Վեհափառ Հայրապետ— Ս. Մեսրոպի ոգին մեռած չէ: Ամերիկահայությունը առնվազն հարյուր հազար դուրս գոյացնելով, պիտի օժտե Մայր Աթոռ տպագրական մեքենաներով, ամեն նպատակի և ամեն պետքի համար: Եվ Ս. Տաճարին զանգերը պիտի ղողանջեն Ձեզի ավետիք տալու, թե Ձեր զավակները կանգնած են Ձեր կողքին, թե Դուք, Վեհափառ Հայրապետ, Ձեր քրիստոնեական ոգիով և հայրական գութով, տիրացաք մեր բովանդակ էություն, առաջնորդելու մեզ Ս. Լուսավորչի կանթեղի լույսով դեպի հոգեկան ազատություն:

Ե. ԱՂԱՋԱՆՅԱՆ

(Բառումն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 27 հունիսի 1956 թ.)

